ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«27» դեկտեմբեր 2017թ No 3733 - Ա

«ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 19-րդ հոդվածի «ժ», 19.3-րդ հոդվածի 11-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկում պահանջող վիճակների կազմակերպման հետևյալ ընթացակարգերը.

1) «Շտապբուժօգնության գծային բրիգադի համար սրտի կանգով մեծահասակ պացիենտների վարման գործունեության ընթացակարգը»՝ համաձայն հավելված 1-ի,
2) «Շտապբուժօգնության վերակենդանացման բրիգադի համար սրտի կանգով մեծահասակ պացիենտների վարման գործունեության ընթացակարգը»՝ համաձայն հավելված 2-ի,
3) «Շտապբուժօգնության բրիգադի գործունեության ընթացակարգը մեծահասակ պացիենտների տախիկարդիաների ժամանակ»՝ համաձայն հավելված 3-ի,
4) «Շտապբուժօգնության անձնակազմի գործունեության ընթացակարգը մանկական բռադիկարդիաների ժամանակ»՝ համաձայն հավելված 4-ի,
5) «Շտապբուժօգնության անձնակազմի գործունեության ընթացակարգը մանկական տախիկարդիաների ժամանակ»՝ համաձայն հավելված 5-ի,

6) «Շտապբուժօգնության գծային բրիգադի գործունեության ընթացակարգը մեկ տարեկանից մինչև սեռահասուն տարիքի երեխաների սրտի կանգի ժամանակ»՝ համաձայն հավելված 6-ի,
7) «Շտապբուժօգնության վերակենդանացման բրիգադի գործունեության ընթացակարգը երեխաների սրտի կանգի ժամանակ»՝ համաձայն հավելված 7-ի,
8) «Շտապբուժօգնության բժշկի գործունեության ընթացակարգը վերին շնչուղիների խցամնան դեպքում 18 ամսեկանից բարձր տարիքի տուժածների մոտ»՝ համաձայն հավելված 8-ի,
9) «Շտապ բուժօգնության բժշկի գործունեության ընթացակարգը վերին շնչուղիների խցամնան դեպքում մինչև 18 ամսեկան երեխաների մոտ»՝ համաձայն հավելված 9-ի,
10) «Շտապբուժօգնության բժշկի գործունեության ընթացակարգը զարկերակային գերճնշման ժամանակ»՝ համաձայն հավելված 10-ի,
11) «Շտապբուժօգնության բժշկի գործունեության ընթացակարգը ենթադրվող ինսուլտի ժամանակ»՝ համաձայն հավելված 11-ի,
12) «Շտապբուժօգնության բժշկի գործունեության ընթացակարգը զարկերակային թերճնշման և շոկի ժամանակ»՝ համաձայն հավելված 12-ի,
13) «Շտապբուժօգնության բժշկի գործունեության ընթացակարգն ուշագնացությունների ժամանակ»՝ համաձայն հավելված 13-ի,
14) «Շտապբուժօգնության բրիգադի համար կրծքավանդակի ցավով պացիենտների վարման գործունեության ընթացակարգը»՝ համաձայն հավելված 14-ի,
15) «Շտապ բուժօգնության բժշկի գործունեության ընթացակարգը չափահասների ցնցումների ժամանակ»՝ համաձայն հավելված 15-ի,
16) «Շտապբուժօգնության բժշկի գործունեության ընթացակարգը գանգուղեղային վնասվածքների ժամանակ»՝ համաձայն հավելված 16-ի,
17) «Շտապբուժօգնության բժշկի գործունեության ընթացակարգը տենդի ժամանակ»՝ համաձայն հավելված 17-ի,
18) «Շտապբուժօգնության բժշկի գործունեության ընթացակարգը մանկական ալերգիկ ռեակցիաների ժամանակ»՝ համաձայն հավելված 18-ի,

19) «Մեծահասակ պացիենտների ողնաշարի անշարժացման գործունեության ընթացակարգը»՝ համաձայն հավելված 19-ի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի խորհրդական Արմեն Փարսադանյանին՝ սույն հրամանը հաստատումից հետո սեղմ ժամկետում ապահովել ընթացակարգերի մուտքագրումը միասնական էլեկտրոնային առողջապահության համակարգ:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

Ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքում

4. Հայաստանի Հանրապետության բժշկական կազմակերպությունների տնօրեններին՝ սույն հրամանով հաստատված ընթացակարգերն ընդունել ի գիտություն:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Ս.Խաչատրյանին:

Լ.ԱԼԹՈՒՆՅԱՆ